ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ
ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան.

Ի պատասխան Ձեր 10.10.2019թ. հ. 01/87Մ գրության՝ տեղեկացվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 25.10.2000 թվականի հ. 682 որոշման համաձայն՝ Ջուղայի փողոցի հ. 5 շենքը հանդիսացել է քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային, և տվյալ շենքի բնակիչները 2007 թվականին վերաբնակեցվել են, սակայն շենքը չի ապամոնտաժվել:

Տեղեկացվում է նաև, որ Երևան քաղաքում առկա 4-րդ կարգի վթարային բազմաբնակարան շենքերի վերաբնակեցման աշխատանքներն իրականացվում են վերոնշյալ որոշման, ՀՀ կառավարության 25.10.2009 թվականի հ. 172-Ն որոշման, ինչպես նաև ամենամյա համայնքային գույքի օգտագործման տրամադրման և օտարման տարեկան ծրագրով սահմանված դրույթներին համապատասխան:

ՀՀ կառավարության 25.10.2000 թվականի հ. 682 որոշման 7-րդ կետով հանձնարարվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետին, ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի կոմիտեի նախագահին, ՀՀ ոստիկանության պետին և Երևանի քաղաքապետին (առաջարկությամբ) քանդման ենթակա բնակելի տների բնակեցումից ազատված բնակարաններում չիրականացնել քաղաքացիների կրկնակի բնակեցում, հաշվառում և գույքային գործարքների պետական գրանցում:

Տեղեկացվում է նաև, որ քննարկվող շենքի փաստացի բնակիչները բազմիցս ծանուցվել են՝ անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար իրենց կողմից ինքնակամ զբաղեցրած բնակարաններն անհապաղ ազատելու մասին: Վերոգրյալի մասին անշարժ գույքի կառավարման վարչության կողմից դիմումատուներին գրավոր բազմիցս տեղեկացվել է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ